

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

**ՍՐԲՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԽՐԱՏ՝
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻԶԵՆ**

Երբեք մի՛ ունենա՛ք խորդախութիւն եւ կեղծաւոր խորհուրդներ, անհաւատ ու անսուրբ վարք, որոնք կորուստի պատճառ են, այլ՝ միշտ ձեր հոգիներուն մէջ կրեցէ՛ք լուսաւոր սրբութիւնը անբիծ սիրոյ երախտիքներով՝ ծաղկելով առաքիմասէր վարժով եւ պսակուելով յաւիտենական յոյսով ի գովեստ Աստուծոյ փառքին:

Քանզի Հոգիի կրակով անարատ սրբութեան հասնելու Ամենասուրբ երրորդութեան օթեւանը կ'ըլլամք երկրի վրայ, որովհետեւ բոլոր սիրամեծներու եւ առաքիմութիւններու զարդը տեսանելի ու անտեսանելի՝ հոգիի եւ մարմինի սրբութիւնն է:


Ամենայն արդարութեան եւ արիութեան թագը եւ պարծանքներու պսակը միշտ սրբութիւնն է: Երկնաւորներու ու երկրաւորներու բոլոր դասերու փառքը, պատիւն ու մեծարանքը սրբութիւնն է, որ կը մօտեցնէ եւ հարազատ կը դարձնէ Քրիստոսի՝ մեր Աստուծոյն եւ բոլոր երկնային զօրքերուն:

**ՄԻԱՄՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ
ՀԱԻԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ**

Երկնաւոր թագաւոր, տո՛ւր ինձի՛ Քու արքայութիւնդ՝ զոր Քեզ սիրողներուն խոստացար եւ զօրացո՛ւր իմ սիրտս, որպէսզի մեղքը ատեմ եւ միայն Քե՛զ սիրեմ եւ Քո՛ւ կամէ՞ղ կատարեմ եւ ողորմէ՛ Քու արարածներուդ եւ ինձի՛՝ քազմամեղիս:

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

**ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ
Ս. ՊԱՏԱՐԱԳ**



ՊԱՏԱՐԱԳԻ ԷՈՐՀՈՐԴԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

2.- Պատրաստութիւն ընծաներուն

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ

«Ամէն բանի համար օրհնեա՛լ ես, Տէր: Կ'օրհնաբանենք քեզ, կը գովաբանենք քեզ, գոհութիւն կը յայտնենք եւ կ'աղաչենք քեզի, Տէ՛ր, մեր Աստուածը»:

Նուիրական այս պահուն պատարագիչ քահանան երկրպագել էտք Ս. Մեղանին, կը խնդրէ ու կ'աղաչէ երկնաւոր Հօրմէն՝ Ամենակալէն, որպէսզի մշտնջենակից եւ բնութենակից Ս. Հոգին դրկէ հաւատացեալ ժողովուրդին եւ յատկապէս Ս. Մեղանին վրայ գտնուող ընծաներուն: Հոս է, որ Ս. Հոգոյ ներգործութեամբ նշխարը կը փոխարկուի Քրիստոսի Մարմնոյ եւ զինին՝ Քրիստոսի Արեան:

Սրբազնագոյն պահն է, ողջ եկեղեցին եղբայրացած սիրոյ մթնոլորտին մէջ, ընկալել էտք քաղցրութիւնը հրեշտակներու երկնային մեղեդիին, Աստուծոյ հայրական լոյս հովանաւորութեան ներքեւ երկիրաձութեամբ եւ համակ աղօթք դարձած՝ վերացումով կ'ողջունէ Ս. Հոգոյ ներգործումը...

Շարունակելի



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ՃԷ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 8 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2024

ԹԻԻ 36

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 13. 2-11: Բ. Կր. 7. 4-16: Սր. 7. 31-37:

ՏՕՆ ՍՐԲՈՒՎԻՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԾՆԵՂԵԱՆ ՅԱՆՆԱՅԷ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

7.31-37

Յիսուս Տիրոսի սահմաններէն մեկնելով, Սիդոնի վրայով անցաւ Դեկապոլիսի սահմաններէն եւ եկաւ Գալիլիայի ծովեզերքը: Եւ ահա իրեն բերին խուլ եւ համր մարդ մը՝ խնդրելով, որ ձեռքը դնէ անոր վրայ: Յիսուս զայն ամբողջէն հեռու մէկ կողմ տարաւ, մատները անոր ականջներուն մէջ դրաւ, յետոյ թքեց եւ դպաւ անոր լեզուին: Ապա երկինք նայեցաւ, հառաչեց եւ ըսաւ. «Եփփաթա՛», որ կը նշանակէ «բացուէ՛»: Նոյն վայրկեանին անոր ականջները բացուեցան, եւ լեզուն բացուելով՝ սկսաւ կանոնաւոր կերպով խօսիլ: Յետոյ Յիսուս պատուիրեց ժողովուրդին, որ ռեւէ մէկուն չըսեն: Սակայն ինչքան ալ ան կը պատուիրէր, որ չտարածէն, անոնք առաւել չափով կը պատմէին այս մասին: Մարդիկ աւելի եւս կը զարմանային եւ կ'ըսէին. «Այս մարդը ամէն ինչ լաւ կը կատարէ. տեսէք, խուլերուն իսկ լսել կու տայ եւ համրերուն՝ խօսիլ»:

ԱՌԱԿԱՑ (Գ. 23, 19-25)

Որդեա՛կ իմ, լսէ՛ ու իմաստուն եղի՛ր եւ քու սիրտդ դէպի ուղիղ ճամբան շտկէ՛: Մի՛ ընկերանար գինեմոլներուն ու իրենց մարմինը մաշեցնողներուն, վասն զի գինեմոլն ու շոռայր աղֆատ կ'ըլլան եւ շատ քուրճակ պատուած հանդերձներ կը հագցնէ:

Հնազանդէ՛ մօրդ, որ քեզ ծներ է, ու մի՛ անարգեր քու հայրդ, երբ կը ծերանայ: Ճշմարտութիւնը ծախու ա՛ն ու զանկա մի՛ ծախեր: Նմանապէս՝ իմաստութիւնը, իրատն ու հանճարը:

Սրդարին հայրը շատ պիտի ցնծայ եւ իմաստուն գաւակ ծնանողը անոր համար պիտի ուրախանայ: Թող քու հայրդ ու մայրդ քու վրադ ուրախանան ու քեզ ծնանողը թող ցնծայ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՆԻԿԻՌՅ Ս. ԺՈՂՈՎՈՅՆ

318 ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ

Եկեղեցական հայրերու գումարած առաջին տիեզերական ժողովի յիշատակը, տօնի ձևով կը կատարուի հայոց եկեղեցւոյ մէջ, ինչպէս միւս երկու տիեզերական ժողովներու յիշատակը (Կ. Պոլիս եւ Եփեսոս):

Նիկիոյ ժողովը գումարուեցաւ 325 թուականին, 318 հայրապետներու մասնակցութեամբ, Կոստանդիանոս կայսեր արտօնութեամբ: Ժողովը գումարուելու շարժառիթը Ադեֆուսանդրիացի երէց Արիոսի հետաքրքրութիւնն էր: Արիոս կը ժխտէր Յիսուսի հաւասարութիւնը Հօր՝ Աստուծոյ հետ եւ չէր ընդուներ Յիսուսի Աստուած ըլլալը: Ըստ Արիոսին, Յիսուսը պարզապէս գերմարդկային արարած մըն էր:

Նիկիոյ ժողովին Տրդատ թագաւորի եւ Գրիգոր Լուսաւորիչի կողմէն կը մասնակցէր Արիստակէս եպիսկոպոսը: Քննուեցաւ Արիոսի մոլար ու հերետիկոսական շարժումը, դատապարտուեցաւ անոր վարդապետութիւնը, հաստատուեցաւ նշմարիտ դաւանանքը եւ կազմուեցաւ «Հաւատոյ հանգանակ»-ը:

Նիկիոյ հանգանակը աւելի նոխացած ձևով կ'ըսուի եկեղեցւոյ մէջ՝ պատարագի ընթացքին, աւետարանի ընթերցումէն անմիջապէս ետք:

Հաւատամքի բովանդակած կէտերը իւրաքանչիւր քրիստոնեայի համար քրիստոնեական հաւատքի եւ դաւանութեան բանաձեւերն են:

Հաւատամքը կը բովանդակէ Աստուծոյ, Որդւոյ, Ս. հոգւոյ, եկեղեցւոյ, Մկրտութեան, մեղքի, մեռելներու յատրութեան, յաւիտենական կեանքի, վերջին դատաստանի, երկինքի թագաւորութեան եւ հոգիներու անմահութեան մասին քրիստոնեաներու ունեցած հաւատքն ու դաւանութիւնը:

Նիկիոյ, ինչպէս նաեւ միւս երկու տիեզերական ժողովներու յիշատակի օրը եկեղեցւոյ մէջ կ'երգուին հայրապետներու նուիրուած շարականներ, ուր անոնց ներքողը հիւսուած է որպէս հաւատքի հիմքերը հաստատողներ:

Ս. ՀՈԳԻՈՎ ԶՕՐԱՆԱԼՈՒ ԱՂՕԹՔ

Գիշեր ու ցերեկ եւ ամէն ժամ կ'աղաչենք քեզի եւ կը խնդրենք, մարդասէր Տէր: Լսէ՛ մեզ, ո՛վ Աստուած, մեր Փրկիչը, ականջդ մեզի խոնարհեցուր, որպէսզի զուր տեղ չյոգնինք, այլ՝ մեր ճիգը արդարութեան գործ եւ աստուածապաշտութեան պտուղ նկատէ՛: Ընդունէ՛ մեր աղօթքն ու երկրպագութիւնը, ո՛վ Տէր, եւ բուողորմութեամբդ հատուցանէ՛ մեզի, առատապէս: Զու ամենապարզ հովանիին տակ ծածկէ՛ մեզ, եւ Սուրբ հոգիդ զօրութեամբը զօրացու՛ր մեզ, ո՛վ Տէր: Աչքի բիբի պէս պահէ՛ մեզ եւ բու բարերարութիւնդ ցոյց տուր մեզի, որպէսզի բու սուրբ անունդ գովուի եւ փառաբանուի: Որովհետեւ բոլոր արարածները մշտնջենաւոր փառաբանութեամբ բու փառքդ կը հիւսեն բարձունքներուն մէջ, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ԹԵՐԱԿԱՒԱՏՈՒԹԻՒՆԸ ԱՐԳԵԼՔ ՄԸՆ Է, ՈՐ ԱՍՏՈՒՎՅՈՒՄԸ ԳՈՐԾԷ ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ

«Յիսուս կոյրին ձեռքը բռնելով՝ զայն գիւղէն դուրս հանեց, թուքով թրջեց անոր աչքերը եւ ապա ձեռքով դպաւ անոր աչքերուն» (Մր. 8.23): Ինչո՞ւ Յիսուս Բեթսայիդայէն դուրս հանեց կոյրը զայն բժշկելէ առաջ, որովհետեւ ան արժանի չգտաւ, որ Բեթսայիդան ականատես վկան ըլլար նման հրաշքի մը, քանի որ թերահաւատներով լեցուն գիւղ մըն էր (Մտթ. 11.21):

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ՂԱՍԸ

Միբելի եղբայր եւ քոյր, անհաւատութիւնը կամ թերահաւատութիւնը կը կաշկանդէ Աստուծոյ գործունեութիւնը մեր կեանքին մէջ: Աստուած իր հրաշքները չի գործէր մեր կեանքին մէջ՝ եթէ երբեք թերահաւատ կամ անհաւատ ենք: Մարկոս Աւետարանիչ խօսելով Նազարէթ քաղաքին մասին՝ կը հաստատէ, թէ «Յիսուս չկրցաւ ռեւէ հրաշք գործել հոն! (Մր 6.5-6), եւ ինչո՞ւ, որովհետեւ անհաւատ մարդիկ էին Նազարէթի բնակիչները: Ուստի, հետո մնանք թերահաւատութենէն, եթէ երբեք կ'ուզենք ականատես վկան ըլլալ Աստուծոյ մեծամեծ գործերուն:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ ԶԱՐԻՔԷՆ, ԶԱՐ ՄԱՐԳՈՅՄԷ, ԵՒ ԱՆՈՅ ԼԱՐԱՑ ՈՐՈՎԱՅԹՆԵՐԷՆ ՀՆՈՒՄ ՄԵԱԼ, ԿԱՐԿ՝ ՍԱՂՄՈՍ 59

Թշնամիներէս ազատէ՛ զիս, ո՛վ իմ Աստուածս, վրաս յարակողներէն պաշտպանէ զիս: Ազատէ՛ զիս չարագործներէն, արիւնահեղ մարդոցմէ փրկէ՛ զիս: Տե՛ս ահա, դարան լարած՝ ինծի կը սպասեն: ինծի դէմ դաւ կը նիւթեն վայրագ մարդիկ, իմ ոչ մէկ մեղքիս կամ յանցանքիս համար, Տէր: Ո՛չ մէկ անօրէնութիւն գործած եմ, բայց կը յարակին եւ ինծի դէմ նակատ կը կազմեն: Ե՛լ, տե՛ս եւ օգնէ՛ ինծի: Դուն, Տէր, Ամենակա՛լ Աստուած, Աստուածը բու ժողովորդիդ, ե՛լ պատժէ՛ բոլոր ազգերը, ողորմութիւն ցոյց մի տար նենգ չարագործներուն: Ամէն իրիկուն կը վերադառնան, շան պէս ռոնալով քաղաքին շուրջ կը դառնան, իրենց բերնէն դուրս փսխելով սպանիչ խօսքեր, որոնք իրենց շրթունքներուն վրայ են միշտ. որովհետեւ կը խորհին՝ «Ո՞վ է լսողը»: Բայց դուն, ո՛վ Տէր, կը ծիծաղիս անոնց վրայ, եւ կը հեզնես այսպէս խորհող ազգերը:

Ո՛վ իմ Զօրութիւնս, քեզի՛ կը սպասեմ, որովհետեւ ապաւենս ես, ո՛վ Աստուած: Զիս սիրող Աստուածը ինծի օգնութեան պիտի հասնի, Աստուած ինծի յաղթապանծ նայիլ պիտի տայ թշնամիներուս վրայ:

ՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ ԱՄԷՆ ՕՐ ՄԵՐ ԱՂՕԹՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼ ՍԱՂՄՈՍԷՆ